№ 20 Հինգշաբթի Փետրվարի 18 1888 Հինգշաբթի Փետրվարի 18 № 20

ՏԱՍՆ ԵՒ Վ. ԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ֆինանսների մինիստրի նոր նախագիծը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Իգդիրից. Նամակ Ախալքալաքից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքաց հայերի դրութիւնը. Տեղեկութիւններ Զէյթունից. Պրուսիայի ժողովրդական դպրոցները. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ

—

Ամբողջ ռուսաց մամուլը խօսում է այն նախագծի մասին, որ մշակել է Ֆինանսների այժմեան մինիստր, պ. Վիշնեգրադսկի և որ պէտք է շուտով ներկայացվի պետական խորհրդի հաստատութեան։ Պրօէկտի նպատակն է վերականգնեցնել պետութեան ներքին յարաբերութիւններում ոսկեայ և արծաթեայ դրամի շրջանառութիւնը։ Այդ նախագծի հիման վրա այլ և այլ մասնաւոր վճարումներ պետութեան ներսում, նոյնպէս և արքունի տուրքերի վճարելը պէտք է կատարվեն մետալական դրամով համեմատ այն կուրսի, որ Ֆինանսների մինիստրութիւնից կը սահմանվի ամէն ամիս։ Դրա հետ միասին դիտաւորութիւն կայ թոյլ տալ, որ նոյն վճարումները կատարվեն վճարողի ցանկութեամբ և թղթադրամով, միայն օրվայ կուրսի համեմատ, իսկ վճարողի և վճարն ընդունողի մէջ ծագելի տարաձայնութիւնների դէպքում՝ Ս. Պետերբուրգի բօրսայի օրվայ կուրսի համեմատ։

Երկու մայրաքաղաքների ռուսաց մամուլը, առանց ուղղութեան տարբերութեան, միանակար է համարում պ. Վիշնեգրադսկու այդ ծրագիրը, առարկելով որ մեր թղթադրամի այնպէս էլ ընկած կուրսը աւելի էլ կընկնի, եթէ կիրագործվի ներքին յարաբերութիւններում մետալական դրամով վճարումների ստիպողական կատարելը։ Այդ տեսակ նախագիծ մի տեսակ խոստովանութիւն է, որ մեր թղթադրամի կուրսը այնքան ընկած է արդէն, որ պետութեան ներսում թղթադրամի շրջանառութիւնը պէտք է փոքր առ փոքր փոխարինվի մետալական դրամի, ոսկու և արծաթի շրջանառութեամբ, ուրեմն մեր թղթադրամի այնպէս էլ ընկած վարկը՝ աւելի էլ կընկնի, այլ ևս երբէք չը բարձրանալու համար։

Այդ տեսակ նախագիծ առաջին անգամ չէ, որ ներկայացվում է Ֆինանսների մինիստրութիւնից պետական խորհրդին։ Առաջին անգամ նոյնանման նախագիծ մշակեց և առաջարկեց պետական խորհրդի հաստատութեանը 1877 թուին պ. Բէյտերն, որ այն ժամանակ Ֆինանսների մինիստր էր, այնուհետև Ֆինանսների նախկին մինիստր պ. Բունդէ նոյն տեսակ նախագիծ ներկայացրեց 1883 թուին։ Երկու նախագծերն էլ մերժվեցան պետական խորհրդից, որպէս աննպատակայարմար։ Բունդէի նախագիծը պետական խորհուրդը մերժեց հիմնվելով դլխաւորապէս ռուս յայտնի Ֆինանսիստ և վիճակագրող Նեբօլսինի զեկուցման հիման վրա, որի մէջ մանրամասնօրէն բացատրվում էր Բունդէի նախագծի ամբողջ վնասակարութիւնը և նրանից առաջանալի վտանգը պետութեան նիւթական դրութեան համար։

Ուրեմն այժմ դա երրորդ անգամն է, որ նոյն նախագիծը առաջարկվում է պետական խորհրդի հաստատութեանը։

Ռուսաց ամբողջ մամուլը միաձայն յայտնում է այն միտքը, որ եթէ պ. Վիշնեգրադսկու պրօէկտը մետալական ստիպողական շրջանառութեան մասին հաստատվի պետական խորհրդից, մեր թղթադրամի վարկը աւելի էլ կընկնի և դրանով աննկարագրելի հարուած կը տրվի պետութեան արդիւնագործութեանն ու առևտրին։ Մեր կրեդիտական բուբլին իր արժէքի մէջ աւելի էլ ընկնելով քան թէ այժմ, և ոչ թէ միայն մեր յարաբերութիւններում արտաքսահմանի հետ, այլ և երկրի ներքին յարաբերութիւններում, բոլոր հաշիւների և վճարումների ժամանակ կառաջանայ կուրսի այնպիսի մի տատանումն և յուզմունք, որ ամեն օր և ամեն տեղ կը յայտնվեն անասելի խառնաշփոթութիւններ Ֆինանսական թէ խոշոր և թէ մանր գործողութիւնների ժամանակ։

Իսկ այդ տեսակ անհաստատ, խառնաշփոթ դրութիւնը կարող է մեծ վնասներ հասցնել ամեն տեսակ առևտրական և արդիւնագործական գործերին և նոյն իսկ իսպառ խափանել գործերը։

Բաղդաւորապէս պ. Վիշնեգրադսկու պրօէկտը, նախ քան պետական խորհրդին ներկայացնելը, ինչպէս հաղորդում է մեզ „Հիւսիսային գործակալութեան“ հեռագիրը, բարձրագոյն հրամայված է քննութեան ենթարկելու Ֆինանսական մինիստրութեան մէջ կազմված մի յանձնաժողովին, որի խորհրդաժութիւններին, կառավարութեան հրամանով, մասնակցելու են Ռուսաստանի ամենանշանաւոր առևտրական քաղաքների բօրսային մասնաժողովների մի մի, կամ երկու երկու անդամներ։

Դա ուրախալի երևոյթ է և յոյս ունենանք, որ այդ յանձնաժողովը մասնագէտ և գործին հմուտ անձանց մասնակցութեամբ, կը պարզի հարցը, բազմակողմանի կերպով քննութեան ենթարկելով հարցի էութիւնը և կշռելով այն վնասը, որ կարող կը լիներ առաջանալ պրօէկտի անմիջապէս ընդունվելուց։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

—

Փետրվարի 1-ին

Գիւղացիների մէջ սովորութիւն կայ ամեն օր հաց թխել. նրանք հացը թխում են թոնիրներում։ Ամեն մի գիւղական տուն ունենում է երկու թոնիր, մինը դրսում, ամառը և տաք եղանակներին վառելու և հաց թխելու համար, իսկ միւս տանը «թոնրատանում» ձմեռը վառելու համար։ Ձմեռը թոնրատունը ծառայում է տան գերդաստանի համար որպէս կայարան։ Ձմեռը թոնիրը վառելու ժամանակ անսովոր մարդը մի բոպէ չէ կարող կանգնել թոնրատան մէջ, նրա աչքերը ծուխից կը կուրանան։ Թէև թոնիր վառելու ժամանակ երթիկը, միակ լուսամուտը և դուռը բաց են թողնում, սակայն մեծ քանակութեամբ ծուխը չէ կարողանում ազատ կերպով դուրս գալ, այլ լցվում է և մնում թոնրատան մէջ։ Այս դեռ թողնենք։ Ձմեռը ցրտութեան պատճառով ընտանիքի փոքր զաւակը չէ կարողանում դուրս գալ բակը խաղալու. նա խաղում է ներսը, թոնրի շուրջը։

Շատ անգամ պատահել և անդադար կրկնվում է հետևեալը. մայրը զբաղված է իր գործով, տնից դուրս է գնացել, մանուկը մօտենում է թոնրին որ տաքանայ և այդ ժամանակ կամ ոտքն է սրլքվում ու ընկնում է թոնիրը, կամ բոցը այրում է նրա հագուստը և իրան երեխային։ Մայրը վերադառնում է և փոխանակ իր աշխոյժ, ուրախ մանկան խաղալիս տեսնելու, տեսնում է այրված.... Այսպիսի դժբաղդութիւնների առաջն առնելու համար մի քանի ընտանիք չինել տուին թոնիրների համար երկաթէ վառարան. սա սովորական վառարանների նման կլոր է, բայց յատակ և ոտներ չունի. բարձրութիւնը մօտ 3/4 արշին, իսկ լայնութիւնը թոնրի բերանի տրամագծի չափ է։ Վերևի երեսում կան չրջանաձև բացուածներ ծխնելոյզի և կաթսաներ դնելու համար. կողքից ունի դռնակ, որտեղից ցան կամ փայտ են ձգում թոնրի մէջ։ (Ցան կամ աթար ասում են ընտանի կենդանիների չորացրած աղբին, որ առանձին խնամքով թխում են պատերին դիւղացի կանայք։ Սա գիւղերում գործ է ածվում որպէս վառելիք։)

Երբ գալիս է թոնիր վառելու ժամանակը, այդ վառարանը դնում են թոնրի բերանին, խողովակները դուրս են հանում երթիկից և վառում են։ Երբ բոլորովին ծուխը անցնում է, վառարանը մէկ կողմ են դնում, հացը թխում են և վերջացնելուց յետոյ նորից դնում են թոնրի վրա։ Այսպիսի վառարանները մի քանի օգուտ ունեն, նախ՝ որ երեխաները կաղատվեն յանկարծական այրվելուց. երկրորդ՝ ընտանիքի մեծ և փոքր անդամները ստիպված չեն լինի թոնիր վառելու ժամանակ բոցի առջև նստել, աչքերը ծխով լցնել, որ շատ վնասում է տեսողութեան և առաջացնում է կարճատեսութիւն և վաղահաս կուրութիւն։ Երրորդ՝ այս վառարանները հաւասարապէս կը տաքացնեն սենեակի օդը, ուրեմն կարիք չի լինի «քուրսի» դնելու։

Շատերը գուցէ չը գիտեն ինչ բան է «քուրսի» դնելը. երբ հաց թխելը վերջացրել են, մեծ կամ փոքր տաբուրէտ (նայելով ընտանիքի անդամների թիւին) դնում են թոնրի վրա, նրա վրա ձգում են մէկ կամ երկու հատ վերմակ, ու շուրջը նստելով ոտքերն ու ձեռները մտցնում են քուրսու տակ։ Քուրսու վնասն այն է, որ տաքացնում է միայն ձեռներն ու ոտները, իսկ մարմնի միւս մասերը մնում են սենեակի սառն օդի մէջ։ Երբ քուրսու տակից 25—30 ջերմութիւնից դուրս են գալիս դէպի 9 կամ էլ աւելի պակաս ցրտութիւնը, անդամները սկսում են սառչել. սրա հետևանքը լինում է ոսկրային հիւանդութիւնը (ռեվմատիզմ), որը, տարաբաղդաբար, խիստ շատ տարածված է գիւղերում։

Շատ ցանկալի էր, որ այս տեսակ վառարանները տարածվէին գիւղերում. շատ թանգ բան չէ, առ առաւելն կարժենայ հինգ բուբլի. բայց ոչքան արժէ այսպիսի 5 բուբլիներ աշխատող մարդկանց կեանքը, որոնք հիւանդութիւնից մեռնում են, կամ մանուկ հասակում ծնողների անզգուշութիւնից ընկնում են թոնրի մէջ և այրվում....

Այս օրերս մի քանի սրտաճմլիկ դէպքեր պատահեցան այստեղ։ Մայրը իր ծծի երեխային օրօրոցի մէջ քուն դնելուց յետոյ՝ գնում է հարևանի տունը. մանկան բարձի տակ մայրը դրած է լինում մի թոփ լուցկի (երևի չոր մնալու համար), որը ջերմութիւնից բոցավառվելով, այրում է օրօրոցը և նրա մէջ կապված երեխային։

Մի ուրիշ մայր թոնիրը վառում է և դուրս է գալիս տնից ինչ որ գործի համար. նրա 6—7 տարեկան աղջիկը մօտենում է բոցավառ թոնրին և չը գիտեմ ինչպէս ընկնում է թոնրի երկարութեամբ ձգված «խաչերկաթի» վրա, ու այլ ևս չէ կարողանում բարձրանալ՝ տեղնուտեղը այրվում է։ Մայրը գալիս է և մարմնի մի քանի մասն է կարողանում ազատել այրվելուց։

Մթթէ դեռ երկար ժամանակ պէտք է տգէտ կանայք իրանց անզգուշութեամբ իրանց զաւակների մահվան պատճառ լինեն։

Բ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Փետրվարի 10-ին

«Մշակի» ներկայ թիւ № 13-ում տպված էր Ախալքալաքից մի ոմն Զ. ստորագրութեամբ հասարակութեան մէջ ձայն և կշիռ ունեցող անձանց դէմ յարձակվելու նպատակով մի թղթակցութիւն։ Պ. Զ. թղթակիցը պահպանելով հնութիւնը և յարձակվելով նոր և թարմ ոյժերի դէմ, ասում է, որ այժմ ընտրվում են դէպուտատներ անգործ, անդրագէտ և մեծ մասամբ էլ պաշտօնին անընդունակ անձնաւորութիւններ։ Բայց ընդհակառակն վերջին 10—13 տարիների ընթացքում հասարակութիւնը հասկանալով մահտեսի-աղայական դասակարգի դէպուտատական պաշտօններում անգործունէութիւնը, սկսեց իր միջից ընտրել երիտասարդական ոյժերին, որոնք ունենալով երիտասարդական եռանդ և ուսման յայտնի պաշար և լինելով պետական լեզուին հմուտ, կառավարում են մեր քաղաքային գործերը ըստ կարգին. ելևմտից մատեանները ուղիղ են և իւրաքանչիւր տարվայ վերջը հաշիւները յանձնելու միջոցին նրանք հասարակութեան կողմից արժանացել են ընդհանուր շնորհակալութեան։ Նրանց կառավարութեան միջոցներումն է, որ չինվեցաւ քաղաքային այգին, հիմնվեցաւ ընթերցարանը, ուսումնարանը, մտցնվեցաւ քաղաքային լուսաւորութիւնը և այլն։ Իսկ ինչ որ վերաբերում է այն հանգամանքին թէ շատերը դժուարութեամբ են յանձն առնում դէպուտատական պաշտօնը, այդ շատ ուղիղ է, որովհետև ընտրվողը զոհելու է իր ամեն շահերը, վաստակը և գործը, և ամբողջ մի տարի պարապելու է քաղաքի գործերով, ոչ մի կոպէկ վարձ չը ստանալով։ Մեզանում դէպուտատը ռոճիկ կամ մի որ և իցէ վարձատրութիւն չէ ստանում թէ հասարակութիւնից և թէ կառավարութիւնից։ Եւ ահա այդ պատճառով է, որ պ. Զ. մի անգամ ծառայելուց յետոյ, այլ ևս դժուարանում է կրկին յանձն առնել դէպուտատական պաշտօնը։ Ներկայումս ընտրված դէպուտատները ևս երիտասարդներ են՝ ռուսագէտ, հայագէտ և խելահաս անձնաւորութիւններ, որոնք իրանց փորձառութեամբ, յոյս ունենք, որ կը վարեն արժանաւորապէս իրանց ստանձնած պաշտօնը։

Նոյն կարծիքը պիտի յայտնենք և հոգաբարձուների մասին, աւելացնելով, որ ներկայ հոգաբարձուների մէջ ոչինչ երկպառակութիւն, ոչինչ կուսակցութիւն և ոչինչ ինտրիգներ չը կան և նրանք գործում են համերաշխ կերպով յօգուտ ուսումնարանի։ Ինչ վերաբերում է ուսուցչական խմբի մէջ միմեանց դէմ թշնամութիւն և կուսակցութիւն լինելու մասին, քանի որ դրա մասին հասարակութեան մէջ ոչինչ ձայն չը կայ, դա թողնում եմ պատասխանելու ուսումնարանների պ. աւագ-ուսուցչին։ Հոգաբարձական խմբի հայր-նախագահի անտարբերութեան մասին իր պաշտօնում, ես չեմ կարող մեղադրել հայր-նախագահին, որովհետև նա, ունենալով քահանայական պաշտօն և ծանրաբեռնված լինելով շատ զանազան տեսակ կողմնակի պաշտօններով և դաստու լինելով արքունական ու հայոց ուսումնարաններում, միջոց չէ ունենում և նախագահի անվարձ պաշտօնով լիապէս զբաղվելու։

Թղթակիցը խօսելով ընթերցարանի մասին, ասում է, թէ նոր վարչութեան շնորհով ընթերցարանը բաւական լաւ դրութեան մէջ է, սակայն հասարակութիւնը չէ պահպանում նրան։ Նա աւելացնում է թէ օտարներն են պահպանում ընթերցարանը և թէ անցեալ տարվայ վերջը տեղացի մի օրիորդ գրվել է ընթերցարանում, որ առաջին դէպքն է Ախալքալաքում։ Դա էլ ճիշդ չէ։ Ընթերցարանը իր հիմնված օրից մինչև օրս ունեցել է իւրաքանչիւր տարի միջին թւով տասն բաժանորդներ տեղիս տիկիններից և օրիորդներից։ Ընթերցարանը միջին թւով տարեկան ունենում է 200 բուբլի մուտք և ծախս, իսկ երկու կամ երեք օտարականներից 10—15 բուբլի ստանալով, ընթերցարանը չէ կարող կառավարվել։ Այդ հանգամանքում համոզվելու համար, հրաւիրում ենք նամակագրին թերթել ընթերցարանի ելևմտից մատեանները։

Վերջացնելով, մի երկու խօսք ևս ասելու եմ աղքատների հոգատար հոգաբարձութեան մասին, որի վրա ևս յարձակվում է պ. Զ.։ Դա իր ընտրված օրից մինչև հիմա ամենայն բարեխղճութեամբ վարում է իր պաշտօնը և տարէնը երկու անգամ տեղիս եկեղեցում, Ծննդեան և Զատկին, երբ լի է լինում եկեղեցին երկու սեռի բազմութեամբ, հոգաբարձական ժողովի անդամ Խորէն աւագ քահ. Բարսեղեանց մանրամասն հաշիւ է տալիս ժողովրդին հոգաբարձութեան գործունէութեան մասին։ Եւ չը նայելով որ նոյն հոգաբարձուները շատ անգամ դիմել են դէպուտատներին և հասարակութեանը առանձնապէս վերաստուգելու

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՎԱՂՈՒՑ ՑՈՒԺՎՎՓ

Ամերիկայի Բեռնյա» շոգեմուտքերի մեջ

—

Ամերիկայի Բեռնյա» շոգեմուտքերի մեջ Հայ գաղթականներ մեկնեցան Ամերիկայի Բեռնյա» շոգեմուտքերի մեջ։

յարմարութիւններ ընծայեցին ազգաբնակութեանը:

Երբ զեկտեմբերի սկզբներին սաստիկ անձրևները սկսեցին տեղալ, ազգաբնակութիւնը արդէն ապատանված էր, թէև պատահում էր, որ ամբողջ ընտանիքները ստիպված էին ապրել մի սենեակում մի յարկի տակ, որի միջով անձրևը այնուամենայնիւ անցնում էր: Կերակուրը միշտ առատ չէր և անցած ամիսների ազէտը առաջ էր բերել զանազան հիւանդութիւններ և մահեր: Ամբողջ ազգաբնակութիւնը ամենամեծ երախտագիտութիւն է զգում դէպի բաղմաթիւ օտարները, որոնք ապրում են թէ այդ երկրում և թէ ուրիշ երկիրներում նրանց կողմից տրված առատաձեռն օգնութեան համար:

ՊՐՈՒՍԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

«Մշակի» անցեալ համարներից մէկում առիթ ունեցանք մի քանի տեղեկութիւններ հաղորդելու Ֆրանսիայի և Գերմանիայի ժողովրդական կրթութեան գործի մասին: Այս օրերս Բերլինի ստատիստիական մասնաժողովը հրատարակել է հետաքրքիր տեղեկութիւններ Պրուսիայի ժողովրդական դպրոցների մասին, որոնց գլխաւոր կէտերը ասելիք չենք համարում հաղորդել: Այդ տեղեկութիւնները հաւաքված են 1886 թուականին: Բոլոր մանրամասնութիւններից երևում է, որ Պրուսիայում, որտեղ ժողովրդական կրթութեան գործը վաղուց արդէն նախանձելի դրութեան մէջ է, դպրոցական խնդիրը ոչ թէ միայն կանգ չէ առել, այլ նոյն իսկ արագ քայլերով առաջ է գնում: 1886 թուի Պրուսիայի ժողովրդական դպրոցների թիւը հասնում էր 34,016-ի, 1000 դպրոցով աւելի քան թէ 1882 թուին: Դուցէ չորս տարվայ մէջ 1000 դպրոցի աւելանալը մի մեծ բան չը համարվի, բայց պէտք է նկատել, որ Պրուսիայում վերջին տարիների ընթացքում աւելի ուշադրութիւն են դարձրել դպրոցների ներքին վիճակի վրա, աւելի հոգացել են չատացնել եղած դպրոցների դասատները և ուսուցիչներ աւելացնել, քան թէ նոր դպրոցներ հիմնել, որովհետև ժողովրդական դպրոցները արդէն հաւասարապէս տարածվել են երկրի մէջ: Այդպէս օրինակ, ժողովրդական դպրոցների դասատների թիւը 1882 թուին հասնում էր 65,968-ի, իսկ 1886 թուին այդ թիւը արդէն 75,097-ի հասաւ: 1886 թուին այդ դպրոցների վարժապետների թիւը 57,902 էր, վարժուհիների թիւը 6,848, իսկ օգնական-վարժապետների և օգնական-վարժուհիների թիւն էր 1,180: Այդ դպրոցներում սովորողների թիւը ամեն տարի աճում է. 1886-ին դրանց թիւը հասնում էր 4,838,247-ի: Պէտք է նկատել որ աշակերտների և աշակերտուհիների թիւը Պրուսիայում համարեա հաւասար է. վերոյիշեալից 2,416,203-ը աղջիկներ են, իսկ 2,422,044-ը տղաներ: Դրանց մեծ մասը սովորում են խառն, այսինքն դպրոցների մեծ մասը յաճախում են խառն կերպով թէ տղաներ և թէ աղջիկներ: Պրուսիայում ամեն մի 100,000 բնակչի վրա գալիս է 120 դպրոց. 1,000 բնակչի վրա գալիս է 171 սովորող ժողովրդական դպրոցում: 1884 թուի զինուորագրութիւնից երևեցաւ, որ 100 հոգի նորակոչ զինուորների վրա միայն 2 անգրագէտ էր գալիս: Եւ այդ թիւը չատ պերճախօս է... Պրուսիայում 1886 թուին ժողովրդական դպրոցների վրա ծախսվել է 116,615,648 մարկ: Այդ ահագին ծախքի 79% հոգացվում է տեղական միջոցներով, մի չնչին տոկոսը, այն է 12% տալիս է պետութիւնը, իսկ մնացած 9% ստացվում է ուսման վճարից: Հասկանալի է, թէ ինչ վիթխարի ոյժ է երկրի համար այդպիսի ժողովրդական դպրոցը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսում հրատարակվող «Levant-Herald» լրագիրը հաղորդում է, որ այս օրերս հասաւ Կ. Պոլիս ռուսաց կառավարութիւնից ուղարկված մի կովկասեցի պաշտօնեայ, պ. Բակրաձէ, որին յանձնված է խնդրել թիւրքաց կառավարութիւնից ցոյց տալ իրան այն կալուածագրերի պատճէնները, որոնք տրված էին թիւրքաց կառավարութիւնից Կարսի և Բաթումի նահանգների մէջ գետեղված մահմետական կալուածատէրերին՝ այդ երկու նահանգները Ռուսաստանին միացնելուց առաջ: Երևում է, որ յաճախ են պատահում այժմ այլ և այլ տարակուսանքներ այդ երկու նահանգներում հողային կալուածագրերի վերաբերմամբ: Շատ անգամ այդ երկիրների մահմէական կալուածատէրերը ներկայացնում են ռուսաց կառավարութեանը այնպիսի կալուածագրեր, իբր թէ թիւրքաց տիրապետութեան օրով ստացված, որոնք վիճելի և անվաւեր կարող են համարվել: Ռուսաց կառավարութիւնը վճռել այդ տարակուսանքների պատճառով վերաստուգել երկու նահանգների հին կալուածագրերի վաւերական լինելը և այդ նպատակով է ուղարկված Կ. Պոլիս ռուս պաշտօնեայ պ. Բակրաձէ:

—Գերմանական լրագիրները հաղորդում են, որ այս օրերս վախճանվեցաւ յայտնի գերմանացի սոցիալ-դեմոկրատ Հաղընկլէվէր, որ վերջին ամիսներում հիւանդանոցի հոգեկան հիւանդների բաժնի մէջ էր գտնվում, որտեղ և մեռաւ:

—Թէհրանից մեզ գրում են հետևեալը. «Այստեղ լուր ստացվեց, որ յունվարի 18-ին, Էյուբ-խանը իր մարդկերանցով, որոնք մօտ 1000 հոգի են՝ այր և կին, թողեց Մէշէտը՝ Հնդկաստան գընալու համար, համաձայն անգլիական կառավարութեան կարգադրութեան: Էյուբ-խանը անգլիական գանձարանից ճանապարհածախս է ստացել 500,000 ռուբլի»:

—Բերլինում քաղաքական շրջաններում հաստատ տեղեկութիւն են ստացել, որ թէև Անգլիայի և Իտալիայի մէջ պաշտօնական դաշնադիր չէ կապվել, բայց և այնպէս այդ երկու պետութիւնները պատերազմի դէպքում համերաշխ կը գործեն և վտանգի դէպքում միմեանց կօգնեն:

—Պաշտօնապէս յայտարարված է, որ գերմանական թագաժառանգի հիւանդութեան վերաբերեալ լուրերը չատ անգամ չափազանցրած են եղել, բայց և այնպէս հիւանդի դրութիւնը ընդհանրապէս ծանր է:

—Եթէ հաւատալու լինենք Փարիզի մի քանի լրագիրներին, Իտալիայում արդէն մի քանի բուն պատերազմական կարգադրութիւններ են եղել. այդպէս օրինակ իտալական «Կարմիր խաչի» ընկերութիւնը պատերազմական դրութեան մէջ է դրված, և իբրև թէ զինուորական ճեմարաններում կուրսերը փակված են և օֆիցերներին հրամայված է վերադառնալ իրանց զօրաբաժինները:

—Լուրեր են տարածվել, որ Բելգիան միացել է երեքպետեան դաշնադրութեանը:

—Վիէննայից հեռագրում են, որ «Fremdenblatt» լրագիրը ասում է հետևեալը: «Ոչ մի տեղից բացարձակապէս չեն յայտնում Կօբուրգեան պրինցի իշխանութեան ապօրինի լինելը, նմանապէս ամենքը համոզված են, որ պրինցին հեռացնելու նախաձեռնութիւնը պիտի պատկանի սուլթանին: Ուրիշ կողմից մի քանի կաբինէտներ ըստ երևոյթին դեռ ևս երկիւղ են կրում այն հետևանքների վերաբերմամբ, որոնք կարող են առաջանալ երբ որ Բուլգարիայից կը հեռացվի այժմեան կառավարութիւնը, որը թէև հաստատ և օրինական հող չունի իր ոտների տակ՝ միջազգային իրաւունքի տեսակէտից, բայց և այնպէս ընդունակ յայտնվեցաւ կարգը երկրի մէջ պահպանելու: Այդ պատճառով հասկանալի է, որ կաբինէտները, նախ քան առաջին քայլն անելու բուլգարական այժմեան կառավարութիւնը տապալելու, կը ցանկային նախ և առաջ ստանալ բացատրութիւններ, թէ ինչ միջոցներով են ենթադրում ապագայում պահպանել կարգը և հանգստութիւնը Բուլգարիայում»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ցիւրիխի բարձրագոյն դպրոցներում ուսանում են այժմ 70 հոգի կանայք, որոնց թուում 40 հոգի բժշկականութիւն են սովորում: «Züricher Tageblatt» լրագրում այս օրերս ապվեցաւ մի յայտարարութիւն, որի մէջ ասված է, որ այդ քաղաքի ուսանողուհիների ընկերութիւնը որոշում է քաղաքում մի յարմար դահլիճ, որի մէջ ուսանող-կանայք կարողանային ժողովներ կազմել:

* * *

«Ueber Land und Meer» գերմանական չաբաթաթերթը հաղորդում է, որ այժմ Բերլինում կօնցերտներ է տալիս Ամերիկայից եկած 12 տարեկան Էրնստ Շէլլինդ ազգանունով պիանիստը: Նա ածում է Մէնդելսօնի, Բեթօվենի և Լիստի պիէսաները օրկէստրի դաշնակցութեամբ, նոյնպէս ածում է Բախի, Շուբերտի, Շոպէնի, Լիստի և Մաչկօվսկու ամենադժուար սօլո-կոտորները: Իր ածելով երեխայ-պիանիստը հիացնում է թէ ունկնդիրներին և թէ երաժշտական կրիտիկոսներին: Շէլլինդի կօնցերտները միշտ լի են լինում: Երեխան ուսում է առել Փարիզի և Շտուտգարտի կօնսերվատորիաներում և բացի Ամերիկայից կօնցերտներ է տուել արդէն Փարիզում, Լօնդօնում և Ֆրանկֆուրտում:

* * *

Վիեննայում «Մխիթարեան հայրերի ձեռքով հրատարակվող «Բազմավէպ» հանդէսի մէջ կարդում ենք հետևեալը. «Հուսկաւոր երգահանն պ. Բիանկինի՝ լարելյաչող դիպուածով մի ի ս. Ղազար եկաւ, (ի վանս Մխիթարեան հարց) հայկական երգեր լսելու համար, յորոց զոմանս զարմանալի արագութեամբ արդի երաժշտութեան վերածելով, յանձնվեցաւ իրեն բաց երաժշտութեան ուսուցչութենէ, զրել նաև հայկական Պատարագը և Շարականին մեծ մասը, զորս կատարեց իւր բնաձիր յօժարութեամբ, պահելով անոց բնագրոշմն ըստ կարելոյն ճշդութեամբ, և աւելացնելով մեծ արուեստով և նրբութեամբ անոնց ներդաշնակութիւնն: Ամբողջ Պատարագը արդէն հրատարակվեցաւ ի Մխիթարեան Հարց Ս. Ղազարու 1877-ին, և կը յուսանք որ յաջորդաբար պիտի տպագրվին նաև Շարականներն, զորս նոյն հեղինակն վերածեր է եւրոպական խաղերու, որ և մեծամեծ դժուարութեանց և եղանակաց սեպհականութեան համար, յարգ ունի բոլոր վարժապետաց և հանճարաւոր անձանց առջև: Այս աշխատութիւնս թէպէտ երկայն և փչալից, այլ երաժշտական ասպարիզին մէջ արժանավայել պատիւ ընծայեց Բիանկինիին, սակայն առաւել քան զայլս հայկական եկեղեցին կը պարտաւորի այս պատիւն ընծայել նմա, զի նրա ձեռքով կրցաւ պահել և աւանդել յետնոց իր երգոց թանգագին և սրբազան յիշատակը:»

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 փետրվարի: Բերլինում այսօր ռուսաց ֆօնդերի և թղթադրամի գները նորից ընկան, և այդ պատճառով Պետերբուրգի բօրսայում մուրհակների կուրսը զգալի կերպով տատանվեցաւ. 10 ֆունտ ստերլինգին վճարում էին 123 ռուբլի. 100 գերմանական մարկին՝ 60 ռ. 40 կօպէկ. 100 ֆրանկին—48 ռ. 60 կօպէկ: Պետական ֆօնդերը և դրաւադները Պետերբուրգում ամուր տրամադրութիւն պահպանեցին. բայց բանկային, ապահովագրական և երկաթուղային ակցիաների գները չատ ընկան: Բօրսայում տարածված լուրերը՝ ռուսաց բանկի մեծ կորուստի մասին,—չատ չափազանցրած են. անցեալ տարվայ համար դիվիդենդ չի լինի, բայց կորուստն էլ ծածկվում է պահեստի դումարի մի մասով:

ԽԱՐԿՕՎ, 15 փետրվարի: Դատաստանական պալատը քննելով Կուպիանսկի գաւառի 15 դիւղացիների գործը, որոնք մեղադրվում են իշխանութեանը ընդդիմանալու մէջ, հետևեալ վճիռը կայացրեց. հինգ հոգուն բանտարկել 2-ից մինչև 4 ամիս ժամանակով. իսկ մնացածները արդարացրած են:

ԼՕՆԴՕՆ, 16 փետրվարի: «Times» լրագրի ստացած տեղեկութիւններին նայելով՝ Պետերբուրգի կաբինէտը պատասխանելով Անգլիայի և Իտալիայի կողմից իրան ուղղած հարցին, յայտնեց, որ ինքը երբէք հաւանութիւն չի տայ՝ Բուլգարիայի իշխան ընտրելու կաթոլիկ դաւանութեան պատկանող անձանց:

ՊԵՇՏ, 16 փետրվարի: «Pester Lloid» լրագրի մէջ տպված է մի նամակ Բուլգարիայից, որը ապացուցանում է, թէ իր ժամանակին Բոսնիայի և Հերցեգովինայի գրաւելը թողնվեցաւ Աւստրիային, իբրև վարձատրութիւն ռուսաց ազդեցութեան Հիւսիսային Բուլգարիայում հաստատվելու փոխարէն. այժմ, երբ Արևելեան-Ռումելիան միացաւ Բուլգարիայի հետ, այդ ազդեցութեան վերականգնեցնելը կը նշանակէր տարածել նոյն ազդեցութիւնը Բալկանի այն կողմերը ևս, ուստի և անհրաժեշտ է, որ Աւստրիային տրվի նոր վարձատրութիւն:

ՄՕՍԿՎԱ, 16 փետրվարի: Երէկ երեկոյեան բացվեցաւ ալիւրաղացների համագումար ժողովը: Ժողովին ներկայ էին զիւղատնտեսական ընկերութեան 13 անդամներ և ալիւրաղացների գործի 72 ներկայացուցիչներ: Պետական կալուածների մինիստրութիւնը ժողովի քննութեանը ներկայացրել է հետևեալ հարցերը. 1) Ո՞րքան է նստում մեղանում ալիւրի պատրաստելը. 2) Ի՞նչն է պատճառը, որ ալիւրը անհնչան քանակութեամբ է արտահանվում Ռուսաստանից և ինչով կարելի է այդ պատճառները հեռացնել. 3) Ապահովված է արդեօք մեզ մօտ ալիւրի աւելի ստոր տեսակների վաճառումը. եթէ չէ, ինչով կարելի է ապահովել այդ վաճառումը: Ունենք արդեօք բաւական կօնտինդէնտ էժան, փոքրաւու և տեխնիական պատրաստութիւն ունեցող ջաղացպաններ և ինչով կարելի է այդ պակասութիւնը հեռացնել. 5) Ինչպէս պէտք է անել, որպէս զի ալիւրային արդիւնքները էժանանան. 6) Ինչ նշանակութիւն ունի կարճաժամանակեայ կրէդիտը մեր ալիւրաղացային արդիւնաբերութեան համար նրա այժմեան զրութեան ժամանակ և ինչ պայմաններում կարող է այդ կրէդիտը կանոնաւոր և արդիւնաւէտ համարվել և 7) Ո՞րպիսի ազդեցութիւն ունեն այժմ գոյութիւն ունեցող երկաթուղիների սակագները մեր ալիւրաղացային արդիւնաբերութեան զարգացման վրա և մեր ջրային ճանապարհները: Բանալով ժողովը, նախագահը մի ճառ արտասանեց, որի մէջ պարզեց ժողովի նպատակը: Ժողովին 25 զեկուցումներից աւելի են ուղարկված նրա պրոգրամայի հարցերին վերաբերեալ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 փետրվարի: Երէկ վախճանվեցաւ Բարձրագոյն պալատի օբէր-հօֆմէյստերուհի իշխանուհի Կօչուբէյ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 փետրվարի: Արտաքին առևտրի համար ռուսական բանկը յայտնում է, որ կուրսի պատճառով եղած բոլոր կորուստները ընդունելուց յետոյ և ակտիվի կասկածելի յօդուածները հանդցնելուց յետոյ, բանկի 20,000,000 դրամագլուխը անձեռնմխելի է. բացի դրանից մնում է դեռ պահեստի դրամագլխի մի ազատ մասը:

ՎԻԷՆՆԱ, 17 փետրվարի: Ռուսաց դեսպան Լոբանով-Ռոստովսկի շուտով Պետերբուրգ կերթայ: Բերլինից ստացված տեղեկութիւնների համեմատ, այնտեղ կարծում են, որ Ռուսաստանը դեռ էլի ուրիշ առաջարկութիւններ կանէ բալկանական հարցի առիթով և յոյս ունեն, որ Աւստրիան նրա հետ կը միանայ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ
Փետրվարի 16-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. .	125 ռ.	— կ.
Համբուրգի վրա 100 մարկ — . .	61 »	30 »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	49 »	90 »
Ոսկի — արժէ — . .	10 »	— »
Մաքսային կուպօններ — . .	197 »	— »
Ադծաթ — — — . . .	1 »	38 »
Բօրսային դիսկօնտներ — .	6¼ և	7¼% »
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99 »	75 »
— — — — 2-րդ —	97 »	75 »
— — — — 3-րդ —	98 »	— »
— — — — 4-րդ —	98 »	— »
— — — — 5-րդ —	97 »	75 »
— — — — 6-րդ —	— »	— »
Նոր 4% փոխառութիւն	81 »	50 »
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	98 »	25 »
— — 2-րդ —	97 »	— »
— — 3-րդ —	97 »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	250 »	— »
— երկրորդ —	234 »	75 »
5½% բէնտա	103 »	— »
Ոսկեայ բէնտա	197 »	50 »
Եօթերորդ կօնսօլիդած փոխառութիւն	98 »	— »
Նոր երկաթուղային բէնտա . . .	» —	» 98
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	167 »	— »
Գրաւ. թղ. Ազն. բանկի . . .	98 »	— »
5½% գրաւական թղթեր խերսօնի կալուած. բանկի.	99 »	62 »
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	101 »	50 »
— — Պոլտավայի— —	101 »	— »
— —Պետ.Տուլսկ.— —	101 »	50 »
— — Կիևվի — —	102 »	— »
— — Մօսկվայի — —	102 »	— »
— — Բեսարաբ. Տավր.—	101 »	37 »
— — Նիժ. Սամար. —	101 »	37 »
— — Վիլնայի —	101 »	37 »
— — Թիֆլիսի—27 և 43 տ.	— »	— »
— —Բուենոսայիսի-18 և 43 տ.	— »	— »
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները	615 »	— »
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	265 »	— »
Բիբլինսկ-Վոլոգդայի ընկ.	80 »	— »
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	94 »	50 »
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	94 »	50 »
Օդեսայի — — .	93 »	50 »
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	— »	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը չատ թոյլ է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆՑԻ

(կուկիա, Վ.օրմնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
կին-բժիշկ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ 11—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԷՆԿԼԷՎՍԿԻ—11—12 ժ. ականջների, կոկորդի, սիֆիլիսի և ատամների ց.
Ա. ԳՈՒՐԿՈ—12—1 ժ. աչքի, ներքին և մանկական ց.
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի և ուրբաթ, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. ամեն օր, բացի երեքշաբթի և ուրբաթ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ՁԱԵՎՍԿԻ—5—7 ժ. ջղային ց. և էլեկտրո-տերապիա.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 ժ. ներքին և երեխայոց ց.
Հիւանդանոցումն է մանկաբարձուհի Մ ո զ ե ր։
Վճար—50 կ։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար համաձայնութեամբ։ Մշտական անկողիններ.

Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ՐՈՒԴԿՈՎՍԿԻ

Պատիւ ունեմ յայտնելու հասարակութեան, որ պ. Բոստեվան փարեմուզեան Մանդէնովի տեղ, „ЯКОРЬ“ *Ապահովութեան ընկերութեան Թիֆլիսի* **ԱԳԵՆՏ** *նշանակված է այդ ընկերութեան վարչութեան կողմից՝ կոլէժսկի սովէտնիկ* ՆԻԿՈԼԱՅ ԱԼԷՔՍԷԵՎԻՉ **ՇԱԴԻՆՈՎ**։

Գործակալութիւնը գտնվում է Սօլոլակի փողոցում, Աղաբաբովի տանը, Տօլլէյի մագազինի կողքին։

Տեսուչ „Якорь“ *Ապահովութեան ընկերութեան* Մ. Ս. ՄԱՍՆՈՎՍԿԻ

Թիֆլիս, 16 փետրվարի 1888. 1—1

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

„ЯКОРЬ“ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է՝

ԿՐԱԿԻ ԴԷՄ *ապահովութիւնը անշարժ և շարժական կայքերի։*

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ *ապահովութիւնը, այն է արկղների, բեռների և ֆրախտների, որոնք ուղարկվում են թէ ցամաքով և թէ ջրով։*

ԿԵԱՆՔԻ *ապահովութիւնը, այսինքն կապիտալների, որոնք վճարվում են յայտնի ժամանակամիջոցից յետոյ, կամ մահվան դէպքում։*

Գործակալութիւնը գտնվում է Սօլոլակի փողոցում, Աղաբաբովի տանը, Տօլլէի մագազինի կողքին։

Աղէնտ Նիկոլայ Ալէքսէեվիչ ՇԱԴԻՆՈՎ։ 1—1

Արդէն ծախվում են կատարելագործված, սպիտակ բոցով, անվտանգ

ՇՎԷԴԱԿԱՆ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆՈՎ։

Մեծ քանակութեամբ առնողներին ՆՇԱՆԱՒՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ։

Գործարան Գ. Ա. Տէր-Ասատուրեանի և ընկերութեան, Թիֆլիսում, Վէրա կոչված Թաղում։ 21—50

ԲԺՇԿԱՊԵՏ ԲԷՆԿԼԵՎՍԿԻԻ

Բժշկական ընդունարանը։ Հիւանդները ընդունվում են ամեն օր 9-ից մինչև 11 ժամ առաւօտեան և 4-ից մինչև 6 ժամ երեկոյեան. սիֆիլիսի, կոկորդային, քթային, ականջի և ատամի ցաւերի բժշկութիւնը, պլոմբելը և ատամներ դնելը (ասիստէնտ ատամնաբոյժ Սօբօլէվ)։ Ատամի ցաւով հիւանդների ընդունելութիւնը 9-ից մինչև 7 ժամ։ Գօլովինսկի պրոսպէկտ, տուն նախկին Բէլոյ № 5։

5—10

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԼԷՕԻ „ԾԱՅՐԵՐ“-Ը

ԳԻՆՆ Է 20 ԿՕՊԷԿ

Կարելի է ստանալ Թիֆլիսում՝ Յոնան Դաւթեանից (Ելիզավետեան փողոց, № 25) *և* „Աղբիւրի“ *վաճառանոցում։* ԲԱԳԻՈՒՄ՝ *Տիգրան Ղոնդախսազեանից,* ՂՈՒԲԱՅՈՒՄ՝ *Խաչատուր Փանեանցից,* ՆՈՒԽՈՒՄ՝ *Սիմէօն Շահբազեանցից և* ՇՈՒՇՈՒՄ՝ *Անդրէաս Աբրահամեանցից* 4—5 (Շ. Հ.)

ԺԻՐԱՐԴԻ ՄԱՆՈՒՖԱԿ-
ՏՈՒՐԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՈՒՄ

ԱՄԱՌՎԱՑ ԿԵՐՊԱՍՆԵՐ *կանանց և երախաների զգեստների համար։*
ԴՈՅՆԱՒՈՐ ԿԵՐՊԱՍՆԵՐ *տղամարդկանց զգեստների համար։*
Պարուսինա, (քաթան) կօլոմէնկա, մոխրագոյն և սպիտակ բոգոժա, և մուլեսկիա կիտելների համար։
Ներկայ թվի փետրվարի 1-ից բացված է ԲԱԺԻՆ ՑԱՏԿԱՊԷՍ **ՄԷԲԷԼԻ** *և* **ՎԱՐԱԳՈՅՐՆԵՐԻ** *համար գործածվող կերպասների։*

ԴՕՆՆԷՐ *և* ԼԷՑՏՑ

Պահեստի բաժինը ԲԱԳՈՒՄ *մէջ, Օլգինսկայա փողոցում։*

3—5

ԳԱՑԵԱՆԷ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԵԱՆ, ՆՈՒՆԷ ԻՍԱՀԱԿԵԱՆ, *տիտուլէարնի սովէտնիկ* ԲՕՂԴԱՆ ԲԷԺԱՆԵԱՆ *և* ԵԳՕՐ ԲԵԺԱՆԵԱՆ ՊԻՐԱԴԵԱՆՑՆԵՐԸ *սրտի ցաւով յայտնելով առաջինը իր ամուսնու, երկրորդը իր հօր և վերջինները իրանց եղբօր ազնուական* ԻՍԱՀԱԿ ԲԵԺԱՆԵԱՆ ՊԻՐԱԴԵԱՆՑԻ *մահը, որը տեղի է ունեցել փետրվարի 14-ին, երեկոյեան, խնդրում են իրանց ազգականներին և ծանօթներին շնորհ բերել հանգուցեալի յուղարկաւորութեանը, Դօլուխանովի տնից,—կաթոլիկաց փողոցի վրա,—դէպի Հայոց Ջիգրաշէնի եկեղեցին, շաբաթ օր, փետրվարի 20-ին, առաւօտեան 10 ժամին։ Հոգեհանգիստը կը կատարվի ուրբաթ օր, փետրվարի 19-ին, երեկոյեան 6 ժամին։* 1—2

Այրի տիկին ՔԵԹԵՒԱՆ ԲԶՆՈՒՆԻ *և* ՌՈՒՇԱՆ ԳԵՂԱՄԵԱՆՑ, *խորին ցաւով յայտնելով՝ առաջինը իր որդու, իսկ երկրորդը իր ազգականի* ՏԻԳՐԱՆ ԲԶՆՈՒՆՈՒ ՄԱՀԸ, *խնդրում են իրանց ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեան հանդիսին, որը տեղի կունենայ շաբաթ օր, ամսիս 20-ին ժամը 10-ին հանգուցեալի բնակարանից, Ֆրէյլինսկայա փողոց տուն № 7, դէպի սուրբ Մօղնու եկեղեցին։* 1—1

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ*

Ուրբաթ, 26 փետրվարի, ԲԱԹՈՒՄԻՑ *դուրս կը գնայ շոգենաւ* MENDOZA (ՄԷՆԴՈԶԱ) *նաւապետ* FAVRE (ՖԱՎՐ) *մտնելով Կ. Պոլիս, Զմիռնիա և Սիրա։*

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ *պ.* Դ. ԷՍՍԷՆԺԷՐ, *իսկ* ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ։ 1—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ.*

Հինգշաբթի, մարտի 3-ին, ՄԻՆԳՐԷԼԻԱ (MINGRÉLIE) *շոգենաւը, նաւապետ* ԺԻԲՈՒԷՆ (GIBOIN) *դուրս կը գնայ* Բաթումից *դէպի* Տրապիզոն, Օրդու, Սամսոն, *Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում* Լէմլօղլուի տան, Նաբերէժնայա, *և Թիֆլիսում նախկին* Արծրունի *գալերէում,* № 103. 1—4

„ԱՂԲԻՒՐԻ“ ՎԱՃԱՌԱՆՈՑ

Թիֆլիս, Գօլովինսկի պրոսպեկտ տ. Միրզոեվի

Թիֆլիսում բացված է „Աղբիւրի“ վաճառանոց, յատկապէս երեխաների, աշակերտների և ընտանիքների համար։ „Աղբիւրի“ վաճառանոցում ծախվում են մանկական գրքեր, պատկերներ, նկարներ, նօտաներ, բազմատեսակ շքեղ իրեղէններ երեխաներին և աշակերտներին ընծայելու համար. դպրոցական և դասական հարուստ և բազմատեսակ պիտոյքներ. տպվում են նոյն վաճառանոցում մենագրաններ (զարդարուն գլխատառեր նամակների ճակատներին). գրելու, փոստի և ՏՊԱՐԱՆԱԿԱՆ *ամեն տեսակ ընտիր* ԹՂԹԻ ՄԵԾ ՊԱՀԵՍՏ, *որ կազմում է* Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՐԳՈՒՆԻՆ ԵՂԲԱՑՐՆԵՐԻ ՀՈՒԶԱԿԱՒՈՐ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԲԸ։

Վաճառանոցը ընդունում է Ռուսաստանում և արտասահմանում հրատարակվող մանկական թերթերի բաժանորդագրութիւն։

Վաճառանոցը կամենալով դիւրացնել դաւառաբնակ հեղինակների, թարգմանիչների գործը, ընդունում է Թիֆլիսում տպագրել տալու նրանց աշխատութիւնները։ Ընդունում է միջնորդ լինել և պատուիրել իրանց համար ամեն տեսակ պատկերներ, կլիշայներ։ Վարձու է տալիս „Աղբիւրի“ ծաղկատառերից և նկարներից։—Վաճառանոցը ընդունում է կոմիսիայով ծախելու զանազան հրատարակութիւններ։

Վաճառանոցում զետեղված է և „Աղբիւրի“ խմբագրութեան գրասենեակը, ուր միայն կարելի է բաժանորդ դրվել „Աղբիւրին“։

Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ. Магазинъ Дѣтскаго журнала „Агбюръ“. 4—10 (Հ. Ե)

ЗУБНЫЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ
ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ КОРОБКА 50 И 80 К.
ГИГІЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ БОЛЬШ. ФЛАКОНЪ 80 К.
ГИГІЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ КОРОБКА 30 К.
СКЛАДЪ ВО ВСѢХЪ АПТЕКАХЪ и АПТЕК. МАГАЗ.

ՊՐՕՖԻԶՕՐ Ա. ՇՏԷԽԷՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ
ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 80 ԿՕՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. *Թիֆլիսում՝ Կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկովսկու և Ազմուրովի դեղատներում։ Բագուի մէջ՝ Բէկկէրի մօտ, Քութայիսում՝ Կոկչեվի մօտ, Ստավրոպոլում Բրօխնօցկու մօտ և Եկատերինոդարում։* (Հ.)

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисѣ (Графская ул., домъ бывш. Шабурова).
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՄ ՄԷՋ։

ՀԱՆԲԱՅԻՆ ՋՐԵՐ, *Կովկասեան և արտասահմանեան, այս գարնանը չիչերի մէջ նոր ածված.*

ՑԵՑԻՑ ԵՒ ՄԻԶԱՏՆԵՐԻՑ ՊԱՀՊԱՆՈՂ ՄԻԶՈՑՆԵՐ, *Նաւթալին, քսմֆօրա, ցեց ոչնչացնող հեղուկ, Պարսկական և Դալմաթիայի փոշի, և Բուրէլի անթեմ կոչված բոյսը։*

ՕԴԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐ *պրոֆէսոր* ԿԻՏՏԱՐԱՅԻ, *կարբոլացրած փոշի երկաթի արճասպով, որպէս ամենալաւ միջոց անմաքրութեան տեղերը իստակելու համար, կարբոլեան թթուտ, մաքրված և չը մաքրված տեսակից, խլորային կիր, ծծումբ, երկաթի արճասպ և Մարգանեցի կրկնաթթուտ։*

85—100 (Հ.)

Дозволено цензурою, Тифлисъ 17 Февраля 1888 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.